ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արմսնաբ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
28	Արմսնաբ	ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՁ	Կոշիկ՝ամենօրյա, շտաբային Կոշիկը կարճաճիտք է, արտաքին տեսքը սպորտային ոճի, թեթև, հարմար ամենօրյա կրման համար, քուղերով: Կոշիկի կիսազույգի քաշը 41 չափսի համար միջինում պետք է կազմի 400-450գրամ: Կոշիկը բաղկացած է կոշկերեսի երեսամասից, հետնամասից, կարճ ճտքային փափուկ եզրակից, լեզվակից, հիմնական ներդիրից, ներբանից: Կոշիկի երեսամասը, հետնամասը, ճտքի եզրակի և լեզվակի արտաքին շերտերը արտադրվում են 1.3 – 1.5 մմ հաստությամբ բնական SOFT տեսակի հարթ կաշվից՝ սև գույնի, առանց նակատի (արգելվում է օգտագործել սպիլոկ կամ խոզի կաշի): Առաջամասը մշակվում է հինգ դետալներից , որոնք միանում են միմյանց զույգ կարերով՝ մշակված զույգ կարի մեքենայով: Առաջամասը միանում է վերին փափուկ եզրակին և ետևամասի ձևավոր դետալին ևս զույգ կարերով՝ մշակված զույգ կարի մեքենայով: Կոշիկի ետևամասերի արտաքին դետալների կարի ամրությունը պետք է կազմի ոչ պակաս 140-145 Ն/սմ համաձայն ԳՕՍՏ 9290-76 -ի: Կոշիկի կապումն իրականացվում է սև գույնի քուղերով՝ որոնք անցնում են

			5 զույգ մետաղական փոլակներով: Քուղերը անջրանցիկ նյութից են՝ վերջամասի 1.5սմ հատվածները թերմոմշակում անցած: Լեզվակը և ճտքային վերին փափուկ եզրակը մշակվում են եռաշերտ փաթեթով՝ վերին շերտը բնական կաշի, նեսի շերտը այծի կամ ոչխարի կաշի, իսկ մեջտեղում տեղադրված է սպունգանման նյութ: Կոշիկը ներսից ամբողջությամբ լրացուցիչ մշակվում է ոչ գործվածքային սոսնձապատ միջնապաստառով և 0.7-0.9 մմ հաստությամբ նրբակաշվով՝ այծի կամ ոչխարի: Քթամասում ներսից մշակվում է 1.2 - 1.3մմ հաստության թերմոպլաստե նյութով, իսկ կրնկամասը՝ ներսից մշակվում է 1.3-1.4 մմ հաստության թերմոպլաստե նյութով: Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձով կարակցված, առնվազն 1.8 – 2.2 մմ հաստության բնական հումքից՝ պադոշից և կոշիկի համար նախատեսված 1.8մմ հաստության ստվարաթղթից, որոնց մեջտեղում տեղադրվում է մետաղական սուպինատոր: Արտաքին ներբանը պատրաստված է երկգույնանի (գույների երանգները նախապես պետք համաձայնեցնել պատվիրատուի հետ) մաշակայուն, ջերմակայուն և ցրտադիմացկուն առաջին կարգի տերմոէլաստոպլաստից՝ արտահայտված պաշպանաշերտով: Կոշիկի տակամասի ամրեցման ամրությունը (պատռման լարվածությունը, разрывная нагрузка) պետք է կազմի 81-85 Ն/սմ համաձայն ԳՕՍ 9292-82, իսկ ճկունությունը 11.5 – 13 Ն/սմ համաձայն ԳՕՍ 9718-88: Արտաքին ներբանը կոշիկին միանում է սոսնձման եղանակով, բարձր ճնշման տակ: Ներբանի արտաքին տեսքը և գույնը համաձայնցեվում են պատվիրատուի հետ: Փաթեթավորումը՝ յուրաքանչյուր զույգը տեղադրվում է տուփի մեջ, յուրաքանչյուր 8-12 զույգ տեղադրվում են մեկ արտաքին ստվարաթղթե արկղի մեջ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պատսխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի 2-3 տարբեր չափսերի նմուշներ,

			որից հետո պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները ըստ չափսերի: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար շահագործման ընթացքում, իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը 20 աշխատանքային օրվա ընթացքում անհատույց փոխարինել նորերով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Армснаб в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
28			